

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման սկադեմիան հաշվետու ժամանակաշրջանը ներառող 2012թ. հունվար-մարտ ամիսների ընթացքում կազմակերպել և իրականացրել է ստորև նշված աշխատանքները.

#### **Ակադեմիայի ամբիոնները և ուսումնամեթոդական վարչությունը**

Ակադեմիայի ամբիոնները և ուսումնամեթոդական վարչությունը, որպես Ակադեմիայի կառուցվածքային ստորաբաժանումներ, իրենց աշխատանքները կազմակերպում և իրականացնում են Ակադեմիայի կողմից նախապես մշակված և հաստատված ուսումնական պլաններին և ուսումնական գործընթացի ժամանակացույցին համապատասխան:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- 2011 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև 2012 թվականի փետրվարի 21-ը առկա ուսուցման 1-ին կիսամյակի 1-ին և 2-րդ կուրսերի ձմեռային քննաշրջան,
- փետրվարի 2-րդ և 3-րդ շաբաթների ընթացքում առկա ուսուցման 1-ին կուրսի մագիստրանտների մագիստրոսական թեզերի թեմաների բաշխում ամբիոնների կողմից և ուսումնամեթոդական վարչության կողմից հաստատում,
- փետրվարի 13-ից մինչև մարտի 13-ը առկա ուսուցման երկրորդ կուրսի մագիստրանտների գիտահետազոտական պրակտիկայի անցկացում, մարտի 15-19-ը պրակտիկայի հաշվետվությունների հանձնում ուսումնամեթոդական վարչություն, ներկայացում ամբիոններին և պրակտիկայի հաշվետվության պաշտպանություն մարտի 26-29-ը,
- հունվարի 16-ից մինչև փետրվարի 10-ը է հեռակա ուսուցման երկրորդ կուրսի կառավարչական պրակտիկայի անցկացում, փետրվարի 10-14-ին պրակտիկայի հաշվետվությունների հանձնում ուսումնամեթոդական վարչություն, այնուհետև ներկայացում ամբիոններին և պրակտիկայի հաշվետվության պաշտպանություն փետրվարի 23-24-ը,
- փետրվարի 27-ից և մարտի 12-ից հեռակա ուսուցման առաջին և երրորդ ուսումնական շրջանների քննաշրջանների անցկացում, ներկայումս հեռակա ուսուցման առաջին և երրորդ ուսումնական շրջանների քննությունների պարտքերի մարման գործընթաց:

Ընթացքի մեջ են ամփոփիչ ատեստավորման՝ մագիստրոսական թեզի պաշտպանության և ամփոփիչ քննության հետ կապված նախապատրաստական աշխատանքները:

Կարևորելով պետական և ազգային արժեքների պաշտպանության ռազմավարական նշանակությունը, գիտական ուսումնասիրությունների, կրթական, դաստիարակչական, զինծառայողների շրջանում բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացմանն ուղղված համատեղ ծրագրերի իրականացումը, համապատասխան առաջարկությունների պատրաստումը, մասնագետների վերապատրաստման և

որակավորման բարձրացման անհրաժեշտությունը, Ակադեմիայի կառավարման հոգեբանության ամբիոնի կողմից ՀՀ պաշտպանության նախարարություն է ներկայացվել համապատասխան առաջարկությունների ցանկ, որն ուղղված է նվազեցնելու որևէ լարվածություն կամ հակասություն զինձառայողների՝ իբրև քաղաքացիների անհատական իրավունքների, ազատությունների և նրանց զինվորական պարտականությունների միջև:

### **Վերապատրաստում և որակավորման բարձրացում**

1. ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի և Ակադեմիայի միջև կնքված «Քաղաքացիական ծառայողների «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված վերապատրաստման ծառայությունների» մատուցման պայմանագրի շրջանակներում **քաղաքացիական ծառայողների վերապատրաստում**, որն իրականացվում է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2007 թվականի փետրվարի 5-ի N 107-Ս, 2007 թվականի հունվարի 26-ի N 76-Ս, 2007 թվականի հոկտեմբերի 18-ի N 863-Ս որոշումներով հաստատված՝ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրերին և ժամանակացույցին համապատասխան:

Ակադեմիան իրականացնում է քաղաքացիական ծառայողների աշխատանքի արդյունավետության բարձրացմանն ուղղված վերապատրաստման ծրագրեր՝ կառավարման հնարքների, կառավարչական որոշումների ընդունման մեթոդների, ֆինանսաբյուջետային, հաշվապահական և պետական կառավարման հմտությունների ուսուցման վերաբերյալ, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների առաջին վերապատրաստում:

2.ՀՀ տարածքային կառավարման նախարարության և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի միջև կնքված **«Տեղական ինքնակառավարման մարմինների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման (վերապատրաստման) ծառայություններ»**-ի գնման պայմանագիր

Տեղական ինքնակառավարման մարմինների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման շրջանակներում նախատեսվում է վերապատրաստել Հայաստանի Հանրապետության մարզերի մինչև 800 համայնքների ղեկավարներ և ավագանիների անդամներ:

Կարևորվել է **համագործակցության աշխարհագրության ընդլայնումը** և այդ նպատակով նախատեսվում է փոխգործակցության զարգացման նոր համագործակցության ծրագրերի որոնում, ներդնում և իրականացում:

### **Միջազգային համագործակցություն**

Ակադեմիան մասնակցում է պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպված բազմաթիվ քննարկումների, սեմինարների՝

- 2012 թ. մարտի 22-23-ին Գերմանիայի միջազգային համագործակցության կազմակերպության (GIZ) կողմից Երևանում «Համայնքների զարգացումը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում կազմակերպված սեմինար:

- Թբիլիսիի պետական համալսարանի և Գերմանիայի միջազգային համագործակցության կազմակերպության (GIZ) կողմից 2012 թ. ապրիլի 2 -ին Թբիլիսիում կազմակերպվող «Տեղական ինքնակառավարումը Հարավային Կովկասում» թեմայով ամառային դպրոցի նախապատրաստական աշխատաժողով, որտեղ Ակադեմիայի ռեկտորը հանդես կգա Ակադեմիայում դասավանդվող՝ հանրային կառավարման, տեղական ինքնակառավարման և կայուն զարգացման ոլորտներին առնչվող առարկայական ծրագրերի վերաբերյալ զեկույցով:

- Գիտական հոդվածի պատրաստում և ներկայացում NISPAcee՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների կառավարման ինստիտուտների և դպրոցների միություն: Ակադեմիայի ռեկտոր Ա. Լոքյանը և պրոռեկտոր Թ. Խեչոյանը կմասնակցեն և զեկույցով հանդես կգան «Հանրային կառավարման արևելքն ու արևմուտքը. զարգացման քսան տարիներ» խորագրով միջազգային գիտաժողովին: Հարկ է նշել, որ Ակադեմիան նշված միության ինստիտուցիոնալ անդամ է:

### **Հրատարակվել և տպագրվել է հետևյալ ուսումնական գրականությունը՝**

1. «Կոնֆլիկտի կառավարումը կազմակերպություններում» գիրքը (հեղինակներ՝ հոգ.գիտ.թեկն. Ռ.Վ.Ադուզուլցյան, բժշկ.գիտ.թեկն. Ա.Բ.Լոքյան, հոգ.գիտ.թեկն. Լ.Հ.Պետրոսյան): Գիրքը նվիրված է «Կառավարում» և «Կառավարման հոգեբանություն» մասնագիտությամբ ուսանողներին, հոգեբանության հիմնահարցերով հետաքրքրվող հայցորդներին և ասպիրանտներին կազմակերպություններում կոնֆլիկտային իրավիճակների պատճառների, դրանց կանխարգելման ուղիների հիմնահարցերին ծանոթացնելու և դրանք պարզաբանելու հարցերին:

2. «Պետություն» ուսումնական ձեռնարկը (հեղինակ՝ քաղ.գիտ.դոկտոր Մ.Մ.Մարգարյան): Գրքի նպատակն է Հանրային ծառայողներին ու ուսանողներին ծանոթացնել պետության ինստիտուտի, բնույթի, էության, կառուցվածքի զարգացմանը պատմության հոլովույթում:

**Երաշխավորվել է տպագրության՝** Ակադեմիայի հոգեբանության ամբիոնի դոցենտ Գայանե Հարությունյանի «Լիդերության հիմնական հոգեբանական դպրոցներն ու տիպոլոգիաները» ուսումնական ձեռնարկը:

2012 թվականի մարտից Հայաստանի լրատվական դաշտը հարստացավ ևս մեկ լրատվամիջոցով՝ «**Հանրային ծառայություն**» շաբաթաթերթով, որի հիմնադիրն է Ակադեմիան:

Հրատարակվել է «Հանրային կառավարում» գիտական հանդեսի 1 համար: Ակադեմիայի «Հանրային կառավարում» գիտական հանդեսում տպագրվելու համար ամբիոնների կողմից ուսումնասիրվել և քննարկվել է մոտ 20 հոդված:

### **Այլ աշխատանքներ**

1. Համապատասխան աշխատանքներ են իրականացվում **կրթական գործընթացի որակի բարելավման ուղղությամբ**: Ակադեմիան ընդգրկվել է «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ ծրագրի շրջանակներում նախատեսված «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրման կամ դրանց հետագա

բարելավման նպատակով բուհերին դրամաշնորհների տրամադրման» ծրագրում և այժմ պատրաստվում է դրամաշնորհային ծրագրի հայտը:

2. Հայաստանի Հանրապետությունում կրթական ծրագրերի լիցենզավորման պայմանների ու պահանջների վերահսկման էլեկտրոնային կառավարման համակարգում լիցենզավորված կրթական ծրագրերի գործունեությանն առնչվող տվյալների թարմացման անհրաժեշտությունից ելնելով՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացվել Ակադեմիայի վերաբերյալ համապատասխան տեղեկություններ՝ ըստ տրամադրված ձևանմուշի, էլեկտրոնային կրիչի (CD) տեսքով:

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացվել են Ակադեմիայի «Իրավագիտության», «Կառավարման հոգեբանության» և «Քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության» ամբիոնների վարիչների ընտրությունները:

4. Տեղեկատվության շարունակական տրամադրում Ակադեմիայի դասախոսներին, ասպիրանտներին և մագիստրանտներին՝ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու, սեմինարների մասնակցության միջազգային կրթաթոշակների մրցույթներին, ինչպես նաև միջազգային գիտաժողովների մասնակցության առաջարկներով:

5. Եվրամիության ՏԵՄՊՈՒՍ ծրագրի շրջանակներում Մոլդովայի, Գերմանիայի, Սլովենիայի և այլ երկրների բուհերի հետ ստեղծված կոնսորցիումի «INTEGRA» ծրագրին Ակադեմիայի մասնակցության ծրագրային փաթեթի պատրաստում և ներկայացում:

6. Եվրամիության ՏԵՄՊՈՒՍ ծրագրի շրջանակներում Գերմանիայի, Վրաստանի և այլ երկրների բուհերի հետ ստեղծված կոնսորցիումի «ASPIRE» ծրագրին Ակադեմիայի մասնակցության ծրագրային փաթեթի պատրաստում և ներկայացում:

7. Նախապատրաստական աշխատանքներ հետևյալ ուղղություններով՝

Վերապատրաստման երկու դասընթացի կազմակերպման նախապատրաստում 2012 թ. մայիսի 2-4-ին Ակադեմիայում քաղաքացիական ծառայողների համար անցկացվելիք՝ «Բանակցությունների վարման եղանակները» և «Կայուն զարգացման ռազմավարության իրականացումը» թեմաներով՝ Հարավային Կովկասում Շվեյցարիայի համագործակցության և զարգացման գործակալության (SDC) հայաստանյան գրասենյակի, Ժնևի միջազգային և զարգացման հետազոտությունների ինստիտուտի և ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի հետ համատեղ:

Նյու-Յորքի Կոռնել համալսարանի (ԱՄՆ) պրոֆեսոր Տյու Տրանվիետի՝ «Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաները զարգացման համար և հասարակության/բնակչության ընդգրկվածությունը» թեմայով դասախոսությունների կազմակերպման համար բանակցային նախապատրաստական աշխատանքների վարում:

Ակադեմիայի մասնագետների կողմից նոր՝ «Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաները զարգացման համար» առարկայական ծրագրի մշակում 2011 թ. հոկտեմբերին Միավորված ազգերի կազմակերպության Ասիայի և Խաղաղօվկիանոսյան ավազանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի տեղեկատվության և հաղորդակցության տեխնոլոգիաների ուսումնական կենտրոնի (UN-APCICT/ESCAP) կողմից Կորեայում կազմակերպված տեղեկատվության և հաղորդակցության տեխնոլոգիաների կարողությունների հզորացման 2-րդ տարածաշրջանային ֆորումի տրամադրած նյութերի օգտագործմամբ: Բանակցությունների վարում Մերիլենդի համալսարանի (ԱՄՆ) պրոֆեսոր

Բարբարա Քոուի հետ և համաձայնության ձեռքբերում նրա՝ «Առաջնորդություն և արդյունքներ» թեմայով մեկշաբաթյա դասընթացի կազմակերպման նպատակով:

## **Կազմակերպահրավական, ուսումնամեթոդական փաստաթղթերի ստեղծում**

Ակադեմիայում մշակվել և հաստատվել են հետևյալ փաստաթղթերը՝

**1. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ուսումնական տարվա առաջադիմության արդյունքներով ուսանողական նպաստների և պետական կրթաթոշակների տրամադրման կարգ**

*Կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ձևով ուսանողական նպաստների հատկացման և պետական կրթաթոշակների տրամադրման կարգը և պայմանները:*

**2. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ներքին կարգապահական կանոններ**

*Կանոնները կանոնակարգում են աշխատողների՝ աշխատանքի ընդունման և ազատման կարգը, աշխատանքային պայմանագրի կողմերի հիմնական իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, աշխատանքի ռեժիմը, հանգստի ժամանակը, աշխատողների և սովորողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության միջոցները, ինչպես նաև աշխատանքային հարաբերություններին վերաբերող այլ հարցեր:*

**3. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի աշխատողների անձնական գործերը վարելու կարգ**

**4. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի մագիստրանտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգ**

*Մահմանում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում մագիստրանտների ավարտական ամփոփիչ ատեստավորման (քննության) և մագիստրոսական թեզի պաշտպանության կարգը և պայմանները:*

**5. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ամբիոնների վարիչների ընտրության կարգ:**

*Այն սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ամբիոնների վարիչների ընտրության, աշխատանքային պայմանագրի կնքման և պաշտոնում հրամանագրման կարգը:*

**6. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ամբիոնի կանոնադրություն**

**7. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ամբիոնի վարիչի պաշտոնի անձնագիր**

**8. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի «Հանրային ծառայություն» շաբաթաթերթի խմբագրության կանոնադրություն**

### **Մշակման փուլում են՝**

**Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի գործավարության, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում առկա ուսուցման 2012/2013 ուսումնական տարվա ընդունելության կազմակերպման, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում հեռակա ուսուցման 2012/2013 ուսումնական տարվա ընդունելության կազմակերպման և <Հանրային կառավարում> գիտական հանդեսի հրատարակության կարգերը:**

Նախապատրաստական փուլում են Ակադեմիայի որոշ կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները և պաշտոնների անձնագրերը:

9.Ակադեմիայի աշխատողներն ընդգրկվել են քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների և քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնող մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերում:

30.03.2012թ.